

տանդին Բարձրբերդցի կթղւին կողմէն պատուիրակ ղրկուած էր Պտղոմայիս՝ Ուրբանոս Դ. Պապի կողմէ պատգամաւոր եկող Տիւրոսի արքեպս. Գուլիէլմոսի մօտ՝ կրօնական խնդիրներու համար, իր Յաղագս Հանապատուութեան երկոստամ Առաքելոց զբաղուիլին մէջ (էջ 9) կը գրէ հետեւեալ տողերը. «Եւ զի ձմեռնալին էր ժամանակն՝ ի բազում աւուրս ծանրանաւեալք, հազիւ հասաք մերձ ի յեւն Դեկտեմբերի ամսոյ ի քաղաքն Աքայիա՝ ընդ մեզ ունելով հրամանաւ կաթողիկոսին մերոյ գեպիսկոպոսն Երուսաղէմի զմերասեռ գտեալ ի Տրայիանուպօլիս»։ Այս տողերէն կարելի է գուշակել որ կթղւին հրամանով Սկեռացիին Տրայիանուպօլսէն ընկերացող Երուսաղէմի անանուն եպիսկոպոսն էր այս Յակոբոսը՝ որ իր աքսորէն յետոյ հաւանաբար վերադարձած է Երուսաղէմ եւ շարունակած իր պաշտօնը։ (Տե՛ս մեր յօդուածը, Սիոն, 1927, էջ 82-84)։

ՅԱԿՈԲ ՊԿ. ԵՒ ՊԵ. ՆԱԼԵԱՆ, ԶՄՄԱՌՅԻ.— ԻՄ. 1701 ին. աշկ. և ձեռնասուն Յովհաննէս պօրք. Կոլոտի ՌՃԶԲ (=1723 ին). առաջին անգամ ուխտաւորութեամբ կ'այցիլէ Ս. Յակոբի վանքը իր եղբայրներուն հետ և այդ առթիւ ալ հոն թողած է յիշատակներ։ Յովհաննէս եպս. Երուսաղէմացիի (Հաննէ) մահուան առթիւ՝ Շղթայակիր Գրիգոր պօրք.ին միթիթարութեան կուգայ Երուսաղէմ. Առ. էնկիւրիի 1735 ին. փԿԵ. (1740—49). ՊԿ. (1741—1746). իբր փոխանորդ կը նորոգէ Սկիւտարի Երուսաղէմի վանքը Ս. Յակոբի վանքին զբամովը։ Նալեան ՊԵ. (1749—1751). Եաղուպ ամիրայի միջամտութեամբ դարձեալ ՊԿ. (1752—1764). հրաժարելով պատրիարքութենէ՝ կը քաշուի Սկիւտարի վանքը։ Կենդանութեանը՝ Նալեան պօրք. իր եկեղեցական սպասները և զգեստները կը նուիրէ Ս. էջմիածնի, Երուսաղէմի և Մշոյ Ս. Կարապետի վանքերուն և Գում գափուի Մայր-Եկեղեցիին։ Իր հրաժարման թուականին՝ Անտոն վրդ. Երուսաղէմ կը բերէ Նալեանին Ս. Յակոբի նուիրած գոյքերը, որոնց մէջ նշանաւոր են ոսկիե սկիւն մը և արծաթ գաղաղուն մը։ Նալեան պօրք. կը վախճանի 1764 Յուլիս 19 ին և կը թաղուի Բերայի գերեզմանատունը Յակոբ կթղւի շիրմին մօտ. հետեւեալն է իր տապանագիրը.

«Այս տապան է գերահռչակ առն իմաստնոյ,
Զրիական շնորհաց հոգւոյն տան և տեղւոյ,